Ազգ. երգեր. սեղանի մէջ մի գեղեցիկ ճառ կարդաց Աբժ. Ստեփան վարդապետ Մխիթարեանց, և ապա կենաց բաժակներ առաջարկուեցան վասն Վ. Եկ. Հայրապետի, Ազգիս և Եկեղեցւոյս Հայոց, և միաբանութեանս և Մայր Աթոռոյս, և Կէսցէ աղաղակներով և հրացանաձգութեամբք կը քամէին բաժակները։

Յերեկոյին լուսավառութեան և հրախաղութեան բաւական լաւ հանդէս կատարուեցաւ, ինչպէս և առաջին յերեկոյին միայն լուսավառութիւն եղած էր վասն Գիշերապաշտման։

Ընդհանրապէս այսպէս վերջացաւ հանդէսը և ուխտաւորք 4—5 աւուրց մէջ հետ չհետէ մեկնեցան աստի երթալ յիւրաքանչիւր տեղիսն և ի հայրենիս, ասա ի Մայր Աթոռս Թողլով իւրեանց ջերմեռանդ համակրութիւնքը միանգամայն վառեալ և ոգևորեալ սրտերը, և ընդ ինքեանս տանելով հոգևոր մխիթարութիւնները և այն զգացումները՝ որպիսեաք սիրած են և պիտի սիրեն զԱզգ, զԵկեղեցի, զՄայր Աթոռս Էջմիածին և զԳահակալս Սորին։

Համառօտ հաշուեցողական ամենապէսակ ծրարեանց և ծախուց Ազգային Ընդհանրական Դրամարանի Հայոց Շահակոյ վասն 1871 ամի։

Խմբագրական Արարատ ամսագրոյ

Ինդրեմ գրութեանս հետ ուղարկած 1871 թուականի համառօտ հաշուեցուցակը ամենատեսակ արդեանց և ծախուց Ազգային Հոգևոր դպրոցին Համախուց հրատարակել Արարատ ամսագրոյդ միջոցաւ ի գիտութիւն Հայ հասարակութեան։

ԱՆԴՐԷԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

18 Ապրիլ 1872 ամի, Շամախի։

ՄՈՒՏՔ

	Ռ.	Կ.
Մնացորդ ի 1870 ամէ առ 1 յունվարի 1871 ամի գումարն	2772	70½
Ցարդեանց հոգևոր օրինակատարութեանց Հայոց ժողովրդականաց գիւղաքաղաքին Սալիանու. . .	34	40
Ի խաչահամբոյր արդեանց ուխտատեղեաց Համախուց վիճակի. . .	11	92
Ցարդեանց հոգևոր օրինակատարութեանց օտարականաց Համախուց քաղաքին	13	50
Ի նուիրադրամոց պսակատեարց Համախուց վիճակի.	296	77
Ի գանձանակադրամոց ժողովելոց յեկեղեցիս քաղաքաց Համախուց վիճակի ի հինգ Նաւակատեաց աւուրս.	55	32
Ի թոշակադրամոց աշակերտաց դպրոցին վասն ուսումնառութեան. .	293	50
Ի նուիրադրամոց ստացողաց զծնընդական և զարձակման ի հոգևոր կոչմանէ վկայագիրս.	38	47
Գինք վաճառեալ զրեանց հանդերձ շահաբերութեամբ.	85	60
Ի տոկոսադրամոց մայր գումարաց Ուսումնարանին	192	30
Գինք վաճառեալ 4 փութ 6 ¾ ֆ. սպիտակ մեղրամոմոց հանդերձ շահաբերութեամբ.	187	59½
Նուիրադրամ կտակեալ ի Համախեցի հանգուցեալ Պետրոսէ Սերգէյեանց	5	
Ի կոպէկադրամոց ռոճկաց Ատենապետի և պաշտօնակալաց Կոնսիստորիայի	29	99
Նուիրադրամ ընծայեալ ի Համախաբնակ Պ. Աւագայ Նաչարեանց .	300	
Գումարն է	4317	7

ԾԱԽՔ

	Ռ	Կ
Ռոճիկք Ուսուցչաց և ծառայի.	1007	51

Ի զին այրելի փայտի և այլոց մանրամասն ծախուց.	87	30
Ի զին գնեալ դասական գրեանց.	25	50
գումարն է	1120	31

Առ 1 յունվարի 1872 ամի մնայ ուսում մնարանի սեփհական մայր գումար 3196 ր. 76 կ. յորոց 2847 ր. 60 կ. գոանին ի վերայ զանազան անձանց տոկոսեաք և 349 ր. 70 կ. առ գանձապահն հոգաբարձութեան Թեմական ազգային դպրոցի Հայոց Շամախուոյ. 3196 76

Մանաթ. Բայց յայսոցիկ դրամոց ունի դպրոցն ստանալ 1) ի Կոնսիստորիայէն Հայոց Շամախուոյ ի գին մնոց առաքելոց յեկեղեցիս Բագուայ 135 ր. 2) ի Մայր Եկեղեցւոյն Շամախուոյ ի հաշիւ գնոց 4 փութ և 20 ֆունդ մնագնոց 102 ր. 50 կ. 3) ի կապալառուէ հողոց Մեյսարու վանից Ստեփան բէկի Կեօկչայեանց ապառիկ կալուածագրամ վասն երկուց ամաց այն է ի 1 էն Սեպտ. 1869 ամի ց 1 Նոյն ամսոյ 1871 ամի 100 ր. 4) մնան առ 1 Յունվարի 1872 ամի առ գրավատուն հոգաբարձութեան ուսումնարանական անվճառ գրեանք 160 հատ, արժողութեամբ և հանդերձ չահաբերութեամբ 93 ր. 35 կ.

Խմբագրութիւն Արարատ ամսագրոյ.

Ըստ յանձնարարութեան խորհրդոյ Ժողովոյն Մարդասիրական Ընկերութեան յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, և համաձայն 53 յօդուածոյ բարձրագոյն հաստատեալ կանոնադրութեան նորա, առաքելով ընդ սմին Նոյն Ժողովոյ Նախագահի բոլոր գործունէութեանց հաշիւը յաղագս 1871 ամի, որ ի 25 Յունվարի տարւոյս կարդաց նա տեղւոյս եկեղեցւոյ բակում՝ Նորակառոյց շինութեան դահլիճում ժողովուած Բագու գտնուող ընկերութեան Անդամոց առաջին, խոնարհարար խնդրում եմ ի տեղեկութիւն համայն Անդամոց ընկերութեան և ի լուր Հայ ազգիս, տպագրել այս հաշիւը պատուական Արարատի թերթերումը յետ այնորիկ, երբ յառաջագոյն կհրատարակվի ընկերութեան դրամոց հաշիւը, զոր խմբագրութիւնը ունի ստանալ գանձապետ պարոն Թումայեանցէն։

Ատենադպիր Մարդասէր. Ընկերութեան
Ս. Վարշամեանց

7 Աղբիւր 1872. Բաքու։

ՀԱՇԻՒ

ՆԱԽԱԳԱՀԻ ԺՈՂՈՎՈՅՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՈՒՆ ՍՐԲՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ՀԱՅՈՅ ՎԱՍՆ 1871 ԱՄԻ։

ՍԻՐԵԼԻ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ ԵՒ ԵՂԲԱՐՔ ԻՄ.

Շեղ քաջ յայտնի է, որ իւրաքանչիւր մարդ, քանի որ այս աշխարհում վայելում է և զուարճանում աստուածապարգև զանազան տուրքերով, չպիտի մոռանայ, որ Աստուած նրան ստեղծել է ոչ թէ միայն իւր անձը պարարելու, և գիշեր ու ցերեկ որովայնամոլութեան ու սնափառութեան ետևից ընկած՝ իւր ոսկի ժամերը հեղգութեան, քնոյ և զանազան ունայնութեանց մէջ անցուցանելու համար, այլ զարդարելով նրան ըստ իւր պատկերի, բանականութեամբ, իշխանական հոգւով, մտօք, դատողութեամբ, ընտրողութեամբ և այլ բարոյական ձիրքերով, պատուիրել է վարել իւր կեանքը ոչ թէ անասունների նման առանց պատասխանատուութեան, այլ կարգելով նրան տնտես կամ՝ կառավարիչ կամ ինչպէս թագաւոր հոգևոր և մարմնաւոր գործոց վերայ. իւր սուրբ օրէնքներով սահմանել է այնպէս, որ իւրաքանչիւր մարդ նախ պարտաւոր է հաշիւ տալ իւր խղճմտանացը ամենայն գիշեր՝ երբ կմտանէ ի քուն յիշելով ինչ որ գործել է ամբողջ օրվայ մէջ բարի կամ չար. երկրորդ՝ եթէ վերակացու է ընտրուած մի ազգային կամ քաղաքական պաշտօնի հասարակութեանը, և երրորդ, մահից յետ ահեղ դատաստանի օրում Արարչին։

Անցեալ տարի իմ հաշուետեսութեանս մասնաւորապէս բացատրելով Մարդասիրական Ընկերութեան հիմնադիր անդամոց գործունէութիւնքը, որք ցոյց էին տուած նորա հաստատութեան օրից սկսած, բոլոր դժուարութիւնները և արգելքները, որ պատահել էին մինչև ընդհանուր ժողով կազմելը, և յետ այնորիկ յայտնելով Ընկերութեան Ժողովոյն խորհրդոյ գործերը կառավարելու համար ընտրած ութ անդամոց ջանքը, որ յընթացս 1870 ամի ընկերութեան դրամական գումարը շատացնելու և նորա անդամոց թիւը բազմացուցանելու համար ի գործ էին դրել, մի և նոյն ժամա-